

Ը

ԳՈՒԽՏՈՆԷՆ ԺՐՆԻՆԵՆ ԼԵՒՈՆ Ե



Ի կամ Գուխտան Լուսինեանի հայկական գահը բարձրանալը՝ մեծամեծ խռովութիւններու տեղի տուաւ : Ա՛յն օրէն սկսան ներքին զժգոհութիւններն աւելի սուր կերպարանք ստանալ : Եւրոպայի եւ մասնաւորապէս Հռոմի աջակցութեան վրայ յոյս դնող ու սին խոստումներով օրօքուող սարրը Գուխտանի կողմը բռնեց , իսկ ազգայնականները բունն չկերպով հակառակեցան օտարի մը հայկական գահին վրայ բարձրանալուն : Վերը յիշուած Ֆիլիպի հակազգային ընթացքը ասկաւին չէին մոռցած Հայերը : Բայց վերջապէս յաջողեցաւ Կի , քանի որ իր նախորդը (Լեւոն Գ) անզաւակ մնած էր եւ ինքն անուզակի կերպով գահաժառանգ կը նկատուէր , եւ քանի որ նոյն Լեւոնի հօրաքեռորդին եւ անոր կողմէ ազգին ներկայացուած միակ ընտրելին էր :

Գուխտան գահը բարձրացած օրէն իսկ ցոյց տուաւ , որ իրօք օտար մըն էր ինք . վասն զի Արեւմտքէն շատ մը մարդիկ բերած էր իրեն հետ , նոյնպէս օտար , եւ տէրութեան գլխաւոր պաշտօններն անոնց ձեռքն յանձնած (1) : Ասկէ դատ՝ ամէն գործի մէջ առաջնութեան պատիւը կուտար իր ազգակիցներուն , ոտքի տակ առնելով Հայերու ազգային զգացումները , ինչպէս ըրեր էր Ֆիլիպ : Նոյն իսկ , կենթադրեմ թէ , թագաւոր պսակուած օրը Հայերու կողմէ իրեն արուած « Կոստանդին » հայացած անունը մերժելով՝ իր աւագանի անունը (Կի) կը գործածէր , արհամարհելու համար Հայերը (2) , եւ թղթերով ու զեսպաններով կը վստահացնէր Հռոմը , որ բոլոր

(1) Գարդէղի Ժամսևակագրութիւն , եր . 49 :

(2) Հայ եւ օսար պատմիչներէ շատեր կը գրեն , թէ Ամօրի Լուսինեանի որդիներէն մին՝ Յովհաննէս՝ « Կոստանդին » անունով բազաւորած է 1342 թուին . իսկ հետեւեալ տարին՝ յաջորդած է իր Գուխտն եղբայրը : Տարակոյս